

Հաստատված է
«Արցախբանկ» ՓԲԸ Վարչության
15.09.2020թ. թիվ 288 որոշմամբ

Վարչության նախագահ՝

Ա.Բալայան



ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ուժի մեջ է՝ 17.09.2020թ.-ից:

Ներկայացված պայմանները կարող են փոփոխված լինել. մանրամասներին
կարող եք ծանոթանալ Բանկի [մասնաճյուղերում](#) և պաշտոնական կայքում՝

www.artsakhbank.am հասցեով՝ «Ավանդներ» բաժնում:

Հեռ.՝ +374 60 747779, +374 47 943334

1. ԱՎԱՆԴ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ

1.1. Ավանդի հիմնական պայմաններ

Ժամկետ	Տոկոսագումարի վճարման պարբերականություն	Տարեկան տոկոսադրույք, %							
		մինչև 10 000 000 ՀՀ դրամ		10 000 001-50 000 000 ՀՀ դրամ		50 000 001-100 000 000 ՀՀ դրամ		100 000 001 և ավելի ՀՀ դրամ	
		Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
31-ից 90 օր	Ամսական	4.75	4.79	4.50	4.53	4.25	4.27	4.00	4.02
91-ից 180 օր	Ամսական	6.00	6.13	5.75	5.87	5.50	5.61	5.25	5.35
181-ից 270 օր	Ամսական	7.75	8.00	7.25	7.47	7.00	7.20	6.75	6.94
	Ժամկետի վերջում	8.00	8.05	7.75	7.80	7.50	7.54	7.25	7.29
271-ից 365 օր	Ամսական	9.25	9.62	9.00	9.35	8.75	9.08	8.50	8.81
	Ժամկետի վերջում	9.50	9.48	9.25	9.23	9.00	8.98	8.75	8.73
366-ից 550 օր	Ամսական	9.75	10.18	9.50	9.90	9.25	9.63	9.00	9.36
	Ժամկետի վերջում	10.00	9.75	9.75	9.51	9.50	9.27	9.25	9.03
551-ից 1095 օր	Ամսական	9.75	10.19	9.50	9.91	9.25	9.64	9.25	9.64
	Ժամկետի վերջում	10.00	9.13	9.75	8.92	9.50	8.71	9.50	8.71

Ժամկետ	Տոկոսագումարի վճարման պարբերականություն	Տարեկան տոկոսադրույք, %			
		ԱՄՆ դոլար		Եվրո	
		Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
31-ից 90 օր	Ամսական	1.00	0.99	0.25	0.25

91-ից 180 օր	Ամսական	1.75	1.75	0.50	0.50
181-ից 270 օր	Ամսական	3.00	3.03	1.00	1.00
	Ժամկետի վերջում		3.00		
271-ից 365 օր	Ամսական	3.75	3.80	1.30	1.30
	Ժամկետի վերջում		3.75		
366-ից 550 օր	Ամսական	4.75	4.85	1.40	1.41
	Ժամկետի վերջում		4.69		1.39
551-ից 730 օր	Ամսական	5.00	5.11	1.75	1.76
	Ժամկետի վերջում		4.87		1.73
731-ից 1095 օր	Ամսական	5.25	5.37	1.75	1.76
	Ժամկետի վերջում		4.99		1.72

1.2. Ավանդի նվազագույն գումար՝

- ՀՀ դրամով՝ 50 000 /Հիսուն հազար/
- ԱՄՆ դոլարով՝ 150 /Մեկ հարյուր հիսուն/
- Եվրոյով՝ 150 /Մեկ հարյուր հիսուն/

1.3. Լրացուցիչ պայմաններ

- Ավանդի ներդրման պահից 90-րդ օրից սկսած՝ ավանդապահուն իրավունք ունի, պահպանելով ավանդի գումարի նվազագույն շեմը, նվազեցնել ավանդի գումարը՝ առավելագույնը ավանդի սկզբնական գումարի 20%-ի չափով: Ավանդի գումարի նվազեցման դեպքում փոկոսագումարների վերահաշվարկ չի կատարվում:
- Ավանդային պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում փոկոսագումարները վերահաշվարկվում են ցպահանջ* ավանդի փոկոսադրույքով:
- ՀՀ դրամով ավանդների ներգրավման շեմը վերաբերում է Ավանդապահուի Բանկում գործող ՀՀ դրամով ավանդների (ներառյալ՝ ներդրվող ավանդի, ինչպես նաև հոգուր երրորդ անձի ներդրվող կամ ներդրված ավանդի, որում որպես երրորդ անձ հանդես է գալիս Ավանդապահուն) համախառն դիրքին, բացառությամբ կուրակային ավանդի:

2. ԱՎԱՆԴ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ

2.1. Ավանդի հիմնական պայմաններ

Ժամկետ	Տոկոսագումարի վճարման պարբերականություն	Տարեկան տոկոսադրույք, %			
		մինչև 300 000 000 ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար	
		Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
1095 օր	Ամսական կամ տոկոսների ամսական կապիտալացմամբ	9.00	9.37	4.25	4.33

2.2. Հատուկ պայմաններ

Ավանդատուի պահանջով ավանդի գումարը ժամկետից շուտ ստանալու դեպքում վճարվող տոկոսադրույք	Արժույթ	Օրերի քանակ, տարեկան տոկոսադրույք, %		
		Մինչև 365 օր	366-730 օր	731 օր և ավելի
	ՀՀ դրամ	Ցպահանջ* ավանդի տոկոսադրույք		7.00
ԱՄՆ դոլար			3.50	4.00

2.3. Ավանդի նվազագույն գումար՝

- ՀՀ դրամով՝ 100.000 / Մեկ հարյուր հազար/
- ԱՄՆ դոլարով՝ 200 /Երկու հարյուր/

2.4. Լրացուցիչ պայմաններ

- Կուտակային ավանդների համալրումը թույլատրվում է մինչև մարմանը նախորդող 30-րդ օրը: Կուտակային ավանդի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ ավանդի հաշվի մասին անհրաժեշտ փաստաթղթերի նշումով:
- Օրերի քանակի հաշվարկը և համապատասխանաբար տոկոսագումարների վերահաշվարկը, յուրաքանչյուր հավելագրված գումարի համար կատարվում է առանձին՝ որպես ժամկետի հաշվարկման սկիզբ ընդունելով գումարի հավելագրման օրը:

3. ԸՆԴՀԱՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՆԴ

3.1. Ավանդի հիմնական պայմաններ

Ավանդի արժույթ	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար	
Նվազագույն գումար	500 000		1 000	
Առավելագույն գումար	50 000 000		100 000	
Ժամկետ	730 օր			
Տարեկան տոկոսադրույք, %	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
	9.25	9.64	4.25	4.33
Տոկոսագումարի վճարման պարբերականություն	Ամսական			
Գումարի ավելացում	Չի թույլատրվում			
Գումարի նվազեցում	Չի թույլատրվում			

3.2. Հատուկ պայմաններ

Ավանդատուի պահանջով ավանդի գումարը ժամկետից	Արժույթ	Օրերի քանակ, տարեկան տոկոսադրույք, %				
		Մինչև 180 օր	181-270 օր	271-365 օր	366-550 օր	551 օր և ավելի

շուտ ստանալու դեպքում վճարվող տոկոսադրույք	ՀՀ դրամ	Ցպահանջ* ավանդի տոկոսադրույք	5.25	6.25	6.50	6.75
	ԱՄՆ դոլար		2.00	2.75	3.00	3.25

4. ԳՈՒՄԱՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՆԴ

4.1. Ավանդի հիմնական պայմաններ

Ավանդի արժույթ	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար	
Նվազագույն գումար	500 000		1 000	
Առավելագույն գումար	50 000 000		100 000	
Ժամկետ	550 օր			
Տարեկան տոկոսադրույք, %	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
	6.50	6.39	3.50	3.46
Տոկոսագումարի վճարման կարգ	Ժամկետի վերջում			
Գումարի ավելացում	Չի թույլատրվում			
Գումարի նվազեցում	<ul style="list-style-type: none"> Հաճախորդն իրավունք ունի, պահպանելով ավանդի գումարի նվազագույն շեմը, կատարել նվազեցում ավանդի գումարի առավելագույնը 30 %-ի չափով, բացառությամբ՝ ավանդային պայմանագրի գործողության առաջին 275 օրերի: Ավանդի գումարի նվազեցման դեպքում տոկոսագումարների վերահաշվարկ չի կատարվում: Ավանդային պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում տոկոսագումարները վերահաշվարկվում են ցպահանջ* ավանդի տոկոսադրույքով: 			

5. ԱՎԱՆԴ «ԺԱՌԱՆԳ»

Ավանդի արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Նվազագույն գումար	100 000	200
Առավելագույն գումար	50 000 000	100 000
Տարեկան տոկոսադրույք, %	Բանկում գործող՝ տվյալ արժույթով ներգրավվող 366 օր մարման ժամկետ ունեցող ժամկետային ավանդի առավելագույն տոկոսադրույքից հանած 1.50 տոկոսային կետ ¹	

¹25.12.2020թ. դրությամբ, օրինակ, 1 տարի ժամկետայնությամբ 1,000,000 ՀՀ դրամ ավանդի դեպքում՝ 8.5 %, իսկ դրան համարժեք ԱՄՆ դոլարի դեպքում՝ 3.25 %: Տարեկան տոկոսային եկամտաբերությունը՝ համապատասխանաբար՝ 8.5 % և 3.25%:

Ավանդի ժամկետ	Մինչև երեխայի 18 տարեկանը լրանալը, բայց ոչ պակաս վեց ամսից
Տոկոսագումարի վճարման կարգ	Ամենամյա կամ կապիտալացվում են ավանդի գումարին Ավանդատուն տարին մեկ անգամ իրավասու է փոխել նախկինում ընտրած տոկոսագումարների վճարման եղանակը
Գումարի ավելացում	Իրականացվում է առանց սահմանափակումների, բացառությամբ՝ ավանդային պայմանագրի ժամկետի լրացմանը նախորդող 181 օրերի
Ավանդի գումարի նվազեցում	Չի թույլատրվում
Հատուկ պայմաններ	Ավանդը բացվում է հօգուտ երեխայի
	Հօգուտ նույն երեխայի բացված ավանդների առավելագույն քանակը չի կարող գերազանցել երկուսը
	Ավանդի ներդրման իրավունք ունեն երեխայի ծնողները, այդ թվում՝ որդեգրողները, խնամակալները, պապիկներն ու տատիկները
	Ավանդի տոկոսադրույքը ենթակա է վերանայման յուրաքանչյուր տարվա վերջին աշխատանքային օրը՝ կիրառելով տվյալ պահին Բանկում գործող՝ ավանդի արժույթով ներգրավվող 366 օր մարման ժամկետ ունեցող ժամկետային ավանդների առավելագույն տոկոսադրույքը՝ նվազեցված 1.5 տոկոսային կետով
	Ավանդի ներդրման պահից մինչև 3 տարի ժամկետում ավանդի վաղաժամկետ լուծման դեպքում տոկոսագումարները վերահաշվարկվում են Բանկի ցպահանջ ավանդի տոկոսադրույքով, իսկ Ավանդի ներդրման պահից 3 տարուց հետո ավանդի վաղաժամկետ լուծման դեպքում կատարվում է տոկոսագումարների վերահաշվարկ՝ ավանդատուին վճարելով մինչև ավանդի լուծման օրը հաշվեգրված/վճարված տոկոսագումարների 70%-ի չափով գումար

*Ցպահանջ ավանդի տոկոսադրույք.

Ցպահանջ ավանդի տարեկան տոկոսադրույքը, %								
Տոկոսագումարի վճարման ձև	AMD		USD		EUR		Այլ արժույթով	
	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
եռամսյակային	1.00	1.00	0.50	0.50	0.10	0.10	0.00	0.00

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՑ ԿՍՏԱՆԱՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ, WWW.ARTSAKHBANK.AM ՀԱՍՅԵՈՎ՝ «ԱՎԱՆԴՆԵՐ» ԲԱԺՆՈՒՄ:

6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Ավանդը կարող է ներդրվել Բանկ որոշակի երրորդ անձի անունով:

6.2. Ոչ ռեզիդենտ հաճախորդների կողմից ներդրվող ավանդների պայմանները կարող են սահմանվել յուրաքանչյուր հաճախորդի հետ առանձին բանակցման միջոցով, որոնք կարող են տարբերվել Բանկի կողմից հրապարակված ավանդների ներգրավման վերոնշյալ ընդհանուր պայմաններից:

6.3. Ավանդի գումարին տոկոսների հավելագրման և վճարման կարգը

➤ Ավանդի գումարի դիմաց տոկոսները հավելագրվում են ավանդի՝ Բանկ մուտք լինելու օրվանից մինչև Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը: Հաշվարկներում օգտագործվող տարվա օրերի քանակն ընդունվում է 365, իսկ նահանջ տարին՝ 366:

➤ Ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը Հաճախորդը ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, պայմանագրի գործողության ժամկետում մնում է անփոփոխ:

➤ Երբ ժամկետային ավանդը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, Ավանդատուին տոկոսները վճարվում են Բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով, իսկ ավանդի գումարից գանձվում է արդեն իսկ վճարված տոկոսագումարների և վճարման օրվա դրությամբ Բանկում գործող ցպահանջ ավանդի սահմանված տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարի տարբերությունը, եթե ավանդատեսակի պայմաններով այլ բան սահմանված չէ:

➤ Ավանդատուին տոկոսագումարները վճարվում են Ավանդի արժույթով, բացառությամբ եթե Ավանդատուն տոկոսագումարի վճարման օրը ցանկություն է հայտնել արտարժույթային Ավանդի դիմաց հավելագրված տոկոսագումարները ստանալ չ՞ դրամով: Ընդ որում, արտարժույթային Ավանդի դիմաց հավելագրված տոկոսագումարները չ՞ դրամով վճարելու դեպքում փոխարկումն իրականացվում է վճարման պահին տվյալ արտարժույթի համար Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեքով:

➤ Ավանդների գծով հաշվարկված տոկոսագումարների վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով: Ավանդի գումարի վրա հավելագրված տոկոսները փոխանցվում են Բանկում սպասարկվող Ավանդատուի բանկային կամ քարտային հաշվին:

➤ Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև որպես ավանդ կանխիկ մուտքագրված միջոցները Ավանդատուին կանխիկ վճարելիս միջնորդավճար չի գանձվում:

➤ Որպես ավանդ անկանխիկ մուտքագրված միջոցների կանխիկացման դեպքում գանձվում է միջնորդավճար՝ Բանկում տվյալ պահին գործող սակագների համաձայն, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքում www.artsakhbank.am հասցեով՝ «Սակագներ» բաժնում:

➤ Ավանդի գործողության ժամանակահատվածում Բանկում Հաճախորդի բանկային հաշիվների վարման համար միջնորդավճար չի գանձվում՝ անկախ հաշվով գործարք չկատարելու վաղեմությունից:

6.4. Ավանդի գումարի վերադարձը

➤ Բանկային ավանդի պայմանագրով Բանկն ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնում է Ավանդատուին նրա առաջին իսկ պահանջի դեպքում, բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Երբ Ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, ապա պայմանագիրը համարվում է դադարեցված, եթե Ավանդատուի հետ կնքված բանկային Ավանդի պայմանագրով այլ բան սահմանված չէ: Ավանդի վերադարձման օրը Բանկն ավանդը փոխանցում է Ավանդատուի բանկային/քարտային հաշվին:

➤ Եթե ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:

➤ Ավանդը, դրա մի մասը և/կամ դրա վրա հավելագրված տոկոսները ստանալիս՝ Ավանդատուն Բանկ է ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ և Բանկային ավանդի պայմանագրի իր օրինակը:

➤ Համաձայն ՀՀ/ԱՀ գործող օրենսդրության՝ ներգրավված ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման եկամտային հարկով՝ ՀՀ-ում ավանդի դիմաց հավելագրված տոկոսագումարի 10.00 %-ի չափով, ԱՀ-ում՝ ռեզիդենտ անձանցից՝ 5.00 %-ի չափով, ոչ ռեզիդենտ անձանցից՝ 10.00 %-ի չափով:

6.5. Ավանդի գումարի հատուցման երաշխավորման կարգը



Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորվում է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից: Երաշխավորված ավանդի չափերը սահմանվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերն են՝

- միայն դրամային ավանդի դեպքում՝ մինչև 10 (Տասը) միլիոն ՀՀ դրամ,
- միայն արտարժութային ավանդի դեպքում՝ մինչև 5 (Հինգ) միլիոն ՀՀ դրամ,
- և՛ դրամային (5 (Հինգ) միլիոն ՀՀ դրամից ավել), և՛ արտարժութային ավանդների դեպքում՝ միայն դրամային ավանդը՝ մինչև 10 (Տասը) միլիոն ՀՀ դրամ,
- և՛ դրամային (մինչև 5 (Հինգ) միլիոն ՀՀ դրամ), և՛ արտարժութային ավանդների դեպքում՝ դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5 (Հինգ) միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և բոլոր արտարժութային ավանդները՝ մեկ ավանդ:

Այն դեպքում, երբ Բանկի նկատմամբ Ավանդատուի բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ավանդատուի ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Բանկում ավանդները չեն երաշխավորվում, եթե՝

- Ավանդատուն հանդիսանում է Բանկի ղեկավար և/կամ վերջինիս ընտանիքի անդամ,
- Ավանդատուն հանդիսանում է Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և/կամ վերջինիս ընտանիքի անդամ,
- Ավանդատուն, որպես ավանդի սեփականատեր (համասեփականտեր) հրաժարվել է ավանդի իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
- ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ ավանդատուն հակառակը չի ապացուցել,
- ավանդը Բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին Բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքը առնվազն 1.5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
- ավանդը ներդրված է Բանկի՝ ՀՀ տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում, ինչպես նաև ՀՀ տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում:

6.6. Քաղվածքների և այլ տեղեկությունների տրամադրումը

Բանկն ավանդային պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 30-օրյա պարբերականությամբ Ավանդատուին անվճար տրամադրում է Ավանդային հաշվի քաղվածք՝ օրենքով սահմանված ձևով: Այլ դեպքերում քաղվածքները, դրանց կրկնօրինակները և այլ տեղեկությունները տրամադրվում են Բանկում գործող հետևյալ սակագներով.

- Ավանդային հաշվի մեկ ամսից ավելի վաղեմության քաղվածքի տրամադրում՝ 1 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):
- Ավանդային հաշվի վերաբերյալ վճարային փաստաթղթերի պատճենների տրամադրում՝ յուրաքանչյուր փաստաթղթի համար.

- Յուրաքանչյուր գործարքից հետո՝ 0 ՀՀ դրամ.
- Մինչև 30 օր վաղեմություն ունեցող՝ 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ).
- 31 օրից մինչև 1 տարի վաղեմություն ունեցող՝ 2 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ).
- Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող՝ 3 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):
- Ավանդային հաշվի վերաբերյալ յուրաքանչյուր տեղեկանքի, Հաճախորդի կողմից կատարված գործարքների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում՝ 2 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):
- Փաստաթղթերի և քաղվածքների առաքում (կիրառվում է ի հավելումն տրամադրման սակագնին):
- Ֆաքսային (մեկ էջի համար)՝ 1 800 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ).
- էլ. փոստով՝ 0 ՀՀ դրամ
- փոստային եղանակով՝ ՀՀ/ԱՀ տարածքում՝ 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ).
- պատվիրված առաքման ծառայության միջոցով/DHL և այլն/-ով՝ 35 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Հաճախորդները իրենց նախաձեռնությամբ կարող են հեռախոսային կարճ հաղորդագրությունների (sms) միջոցով տեղեկություններ ստանալ Ավանդային հաշվով գործարքների վերաբերյալ: Կարճ հաղորդագրության տրամադրման սակագինը հետևյալն է՝ 1 sms արժեքը 30 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

6.7. Վեճերի լուծման կարգը

- Ավանդային պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դատական եղանակով, Ֆինանսական համակարգի հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի միջոցով՝ արբիտրաժային համաձայնություն կնքված լինելու դեպքում:
- 10 000 000 (Տասը միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:
- Բանկի և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250 000 (Երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի գումարի ընդհանուր չափը չի գերազանցում 500 000 (Հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

7. ԱՎԱՆԴԱՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

7.1. Ժամկետային ավանդ՝ Բանկի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում

(հաշվարկը նույնն է ԱՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից նմանատիպ պայմաններով ավանդ ներդնելու դեպքում)

- Ավանդի սկզբնական գումար՝ 100,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդրման օր՝ 20.06.20թ.
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 180 օր (մինչև 17.12.20թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 6.00%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 10.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

մեկ օրվա տոկոսային եկամուտ.

$100,000$ (ներդրված գումար) \times 6.00 (տարեկան տոկոսադրույք)/ $100/366$ (տարվա օրերի քանակ) = 16.39 ՀՀ դրամ:

<p>ընդհանուր տոկոսային եկամուտ. 16.39×180 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /17.12.20թ./ օրը) = 2,950.2 ՀՀ դրամ:</p>
<p>զույգ տոկոսային եկամուտ. $2950.2 - 295.02$(ընդհանուր տոկոսային եկամտի 10.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 2,655.2 (ավանդատուին վճարման ենթակա գումար):</p>

Արդյունքում, ներդրված 100,000 ՀՀ դրամը 180 օր հետո կկազմի 102,655 ՀՀ դրամ:

7.2. Ժամկետային ավանդ՝ Բանկի՝ ԱՀ տարածքում գործող մասնաճյուղերում ռեզիդենտի կողմից ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 100,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդրման օր՝ 20.06.20թ.
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 180 օր (մինչև 17.12.20թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 6.00%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 5.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

<p>մեկ օրվա տոկոսային եկամուտ. $100,000$ (ներդրված գումար) \times 6.00 (տարեկան տոկոսադրույք)/100/366 (տարվա օրերի քանակ) = 16.39 ՀՀ դրամ:</p>
<p>ընդհանուր տոկոսային եկամուտ. 16.39×180 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /17.12.20թ./ օրը) = 2,950.2 ՀՀ դրամ:</p>
<p>զույգ տոկոսային եկամուտ. $2,950.2 - 147.5$ (ընդհանուր տոկոսային եկամտի 5%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 2,802.7 ՀՀ դրամ (ավանդատուին վճարման ենթակա գումար):</p>

Արդյունքում, ներդրված 100,000 ՀՀ դրամը 365 օր հետո կկազմի 102,803 ՀՀ դրամ:

7.3. Կուտակային ավանդ՝ Բանկի ՀՀ-ում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում (հաշվարկը նույնն է ԱՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից նմանատիպ պայմաններով ավանդ ներդնելու դեպքում)

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդրման օր՝ 02.12.20թ.
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 1095 օր (մինչև 02.12.23թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 9.00%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Գումարի ավելացում՝ 24.01.21թ.-ին՝ 50,000 ՀՀ դրամ, 21.03.21թ.-ին՝ 150,000 ՀՀ դրամ
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 10.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

<p>Մեկ օրվա տոկոսային եկամուտ. $1,000,000$ (ներդրված գումար) \times 9.00 (տարեկան տոկոսադրույք)/100/366 (տարվա օրերի քանակ) = 245.9 ՀՀ դրամ (մինչև 01.01.21թ.):</p>

1,000,000 (ներդրված գումար) x 9.00 (տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) =246.6 ՀՀ դրամ (01.01.21թ-ից հետո):
Մինչև ավանդի գումարի ավելացման օրը (24.01.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի 245.9x30(օր)+246.6x23(օր) = 13,048.8 ՀՀ դրամ:
Գումարն ավելացնելուց հետո ներդրված գումարը կկազմի 1,000,000 + 50,000 = 1,050,000 ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ 1,050,000 x 9.00/100/365 = 258.9 ՀՀ դրամ:
Մինչև գումարի հաջորդ ավելացումը (21.03.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 258.9 x56 (օր) = 14,498.4 ՀՀ դրամ:
Հերթական գումարի ավելացում կատարելուց հետո ներդրված գումարը կկազմի՝ 1,050,000 + 150,000 = 1,200,000 ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ 1,200,000x9.00/100/365=295.9 ՀՀ դրամ:
Մինչև ավանդի ժամկետի ավարտը (02.12.23թ.) տոկոսային եկամուտը կկազմի՝ 295.9x986 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /02.12.23թ./ օրը) = 291,757.4ՀՀ դրամ:
ընդհանուր տոկոսային եկամուտ. 13,048.8+14,498.4+291,757.4=319,304.6 ՀՀ դրամ:
զուտ տոկոսային եկամուտ. 319,304.6 – 31,930.5 (ընդհանուր տոկոսային եկամտի 10.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 287,374.1 ՀՀ դրամ (ավանդատուին վճարման ենթակա գումար):

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 1,487,374 ՀՀ դրամ, որից ընդհանուր առմամբ ներդրվել է 1,200,000 ՀՀ դրամը:

7.4. Կուտակային ավանդ՝ Բանկի՝ ԱՀ տարածքում գործող մասնաճյուղերում ռեզիդենտի կողմից ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդրման օր՝ 02.12.20թ.
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 1095 օր (մինչև 02.12.23թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 9.00%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Գումարի ավելացում՝ 24.01.21թ.-ին՝ 50,000 ՀՀ դրամ, 21.03.21թ.-ին՝ 150,000 ՀՀ դրամ
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 5.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Մեկ օրվա տոկոսային եկամուտ. 1,000,000 (ներդրված գումար) x 9.00 (տարեկան տոկոսադրույք)/100/366 (տարվա օրերի քանակ) =245.9 ՀՀ դրամ (մինչև 01.01.21թ.): 1,000,000 (ներդրված գումար) x 9.00 (տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) =246.6 ՀՀ դրամ (01.01.21թ-ից հետո):
Մինչև ավանդի գումարի ավելացման օրը (24.01.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի 245.9x30(օր)+246.6x23(օր) = 13,048.8 ՀՀ դրամ:
Գումարն ավելացնելուց հետո ներդրված գումարը կկազմի 1,000,000 + 50,000 = 1,050,000 ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ 1,050,000 x 9.00/100/365 = 258.9 ՀՀ դրամ:
Մինչև գումարի հաջորդ ավելացումը (21.03.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 258.9 x56 (օր) = 14,498.4 ՀՀ դրամ:
Հերթական գումարի ավելացում կատարելուց հետո ներդրված գումարը կկազմի՝ 1,050,000 + 150,000 = 1,200,000 ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ 1,200,000x9.00/100/365=295.9 ՀՀ դրամ:
Մինչև ավանդի ժամկետի ավարտը (02.12.23թ.) տոկոսային եկամուտը կկազմի՝ 295.9x986 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /02.12.23թ./ օրը) = 291,757.4ՀՀ դրամ:
ընդհանուր տոկոսային եկամուտ. 13,048.8+14,498.4+291,757.4=319,304.6ՀՀ դրամ:

զույգ փոկոսային եկամույք.

319304.6– 15,965.2(ընդհանուր տոկոսային եկամտի 5.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 303,339.4 ՀՀ դրամ (ավանդատուին վճարման ենթակա գումար):

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 1,503.339 ՀՀ դրամ, որից ընդհանուր առմամբ ներդրվել է 1,200,000 ՀՀ դրամը:

7.5. Ընդհատման հնարավորությամբ ավանդ՝ Բանկի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում (հաշվարկը նույնն է ԱՀ տարածքում ոչ ռեզիդենտի կողմից նմանատիպ պայմաններով ավանդ ներդնելու դեպքում)

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000 ԱՄՆ դոլար
- Ավանդի ներդրման օր՝ 02.12.20թ.
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 730 օր (մինչև 02.12.22թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 4.25%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Ավանդի ընդհատում՝ առ 01.12.21թ.
- Ավանդի գումարը 365-րդ օրը ստանալու դեպքում՝ տարեկան տոկոսադրույք՝ 2.75%
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 10.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Մեկ օրվա փոկոսային եկամույք.

1,000 (ներդրված գումար) x 2.75(տարեկան տոկոսադրույք)/100/366 (տարվա օրերի քանակ) = 0.08 ԱՄՆ դոլար (մինչև 01.01.21թ.):

1,000 (ներդրված գումար) x 2.75(տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) = 0.08 ԱՄՆ դոլար (01.01.21թ-ից հետո):

ընդհանուր փոկոսային եկամույք.

0.08 x 364 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /01.12.21թ./ օրը) = 29.12 ԱՄՆ դոլար:

զույգ փոկոսային եկամույք.

29.12 – 2.91 (ընդհանուր տոկոսային եկամտի 10.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 26.21 ԱՄՆ դոլար (ավանդատուին վճարման ենթակա գումար) կամ 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ փոխարժեքի դեպքում 12,580.8 ՀՀ դրամ:

Արդյունքում, ներդրված 1,000 ԱՄՆ դոլար ավանդը 364 օր հետո ընդհատելու դեպքում ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 1,026.21 ԱՄՆ դոլար:

7.6. Ընդհատման հնարավորությամբ ավանդ՝ Բանկի ԱՀ տարածքում գործող մասնաճյուղերում ռեզիդենտի կողմից ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000 ԱՄՆ դոլար
- Ավանդի ներդրման օր՝ 02.12.20թ.
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 730 օր (մինչև 02.12.22թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 4.25%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Ավանդի ընդհատում՝ առ 01.12.21թ.
- Ավանդի գումարի 365-րդ օրը ստանալու դեպքում տարեկան տոկոսադրույք՝ 2.75%
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 5.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

<p>Մեկ օրվա փոկոսային եկամուտ. $1,000$ (ներդրված գումար) \times 2.75 (տարեկան տոկոսադրույք)/$100/366$ (տարվա օրերի քանակ) = 0.08 ԱՄՆ դոլար (մինչև 01.01.21թ.): $1,000$ (ներդրված գումար) \times 2.75(տարեկան տոկոսադրույք)/$100/365$ (տարվա օրերի քանակ) = 0.08 ԱՄՆ դոլար (01.01.21թ-ից հետո):</p>
<p>ընդհանուր փոկոսային եկամուտ. 0.08×364 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /01.12.21թ./ օրը) = 29.12 ԱՄՆ դոլար:</p>
<p>գույք փոկոսային եկամուտ. $29.12 - 1.46$ (ընդհանուր տոկոսային եկամտի 5.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 27.66 ԱՄՆ դոլար (ավանդատուին վճարման ենթակա գումար) կամ 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ փոխարժեքի դեպքում $13,276.8$ ՀՀ դրամ:</p>

Արդյունքում, ներդրված 1,000 ԱՄՆ դոլար ավանդը 364 օր հետո ընդհարելու դեպքում ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 1,027.66 ԱՄՆ դոլար:

7.7. Գումարի նվազեցման հնարավորությամբ ավանդ՝ Բանկի ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում (հաշվարկը նույն է նաև ԱՀ տարածքում գործող Բանկի մասնաճյուղերում ոչ ռեզիդենտի կողմից նմանատիպ պայմաններով ներդրվող ավանդների համար)

- Ավանդի սկզբնական գումար՝ $2,000$ ԱՄՆ դոլար
- Ավանդի ներդրման օր՝ 01.12.20թ.
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 550 օր (մինչև 04.06.22թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 3.50%
- Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում
- Գումարի նվազեցում 600 ԱՄՆ դոլարով առ 30.11.21թ.-ին
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 10.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

<p>մեկ օրվա փոկոսային եկամուտ. $2,000$ (ներդրված գումար) \times 3.50 (տարեկան տոկոսադրույք)/$100/366$ (տարվա օրերի քանակ) = 0.19 ԱՄՆ դոլար (մինչև 01.01.21թ.): $2,000$ (ներդրված գումար) \times 3.50 (տարեկան տոկոսադրույք)/$100/365$ (տարվա օրերի քանակ) = 0.19 ԱՄՆ դոլար (01.01.21թ-ից հետո):</p>
<p>Մինչև ավանդի գումարի նվազեցման օրը (30.11.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի 0.19×364 (օր) = 69.16 ԱՄՆ դոլար:</p>
<p>Գումարը նվազեցնելուց հետո ներդրված գումարը կկազմի $2,000 - 600 = 1,400$ ԱՄՆ դոլար: Գումարի նվազեցումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ $1,400 \times 3.50 / 100 / 365 = 0.13$ ԱՄՆ դոլար:</p>
<p>Մինչև ավանդի ժամկետի ավարտը (04.06.22թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 0.13×186 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /04.06.22թ./ օրը) = 24.18 ԱՄՆ դոլար:</p>
<p>ընդհանուր փոկոսային եկամուտ. $69.16 + 24.18 = 93.34$ ԱՄՆ դոլար:</p>
<p>գույք փոկոսային եկամուտ. $93.34 - 9.33$ (ընդհանուր տոկոսային եկամտի 10.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 84.01 ԱՄՆ դոլար (ավանդատուին վճարման ենթակա գումար) կամ 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ փոխարժեքի դեպքում $40,325$ ՀՀ դրամ:</p>

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո, ընդհանուր ներդրված 2 000 ԱՄՆ դոլար ավանդը 365 օր անց 30%-ով նվազեցնելու դեպքում, ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի $2,000-600+84.01 = 1,484.01$ ԱՄՆ դոլար:

7.8. Գումարի նվազեցման հնարավորությամբ ավանդ՝ Բանկի ԱՀ տարածքում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 2,000 ԱՄՆ դոլար
- Ավանդի ներդրման օր՝ 01.12.20թ.
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 550 օր (մինչև 04.06.22թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 3.50%
- Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում
- Գումարի նվազեցում 600 ԱՄՆ դոլարով առ 30.11.21թ.-ին
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 5.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

մեկ օրվա փոկոսային եկամուտ. $2,000$ (ներդրված գումար) \times 3.50 (տարեկան տոկոսադրույք)/ $100/366$ (տարվա օրերի քանակ) = 0.19 ԱՄՆ դոլար (մինչև 01.01.21թ.): $2,000$ (ներդրված գումար) \times 3.50 (տարեկան տոկոսադրույք)/ $100/365$ (տարվա օրերի քանակ) = 0.19 ԱՄՆ դոլար (01.01.21թ-ից հետո):
Մինչև ավանդի գումարի նվազեցման օրը (30.11.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի 0.19×364 (օր) = 69.16 ԱՄՆ դոլար:
Գումարը նվազեցնելուց հետո ներդրված գումարը կկազմի $2,000 - 600 = 1,400$ ԱՄՆ դոլար: Գումարի նվազեցումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ $1,400 \times 3.50 / 100 / 365 = 0.13$ ԱՄՆ դոլար:
Մինչև ավանդի ժամկետի ավարտը (04.06.22թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 0.13×186 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /04.06.22թ./ օրը) = 24.18 ԱՄՆ դոլար:
ընդհանուր փոկոսային եկամուտ. $69.16 + 24.18 = 93.34$ ԱՄՆ դոլար:
զույգ փոկոսային եկամուտ. $93.34 - 4.67$ (ընդհանուր տոկոսային եկամտի 5.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 88.67 ԱՄՆ դոլար (ավանդատուին վճարման ենթակա գումար) կամ 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ փոխարժեքի դեպքում $42,562$ դրամ:

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո, ընդհանուր ներդրված 2 000 ԱՄՆ դոլար ավանդը 365 օր անց 30%-ով նվազեցնելու դեպքում, ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի $2,000-600+88.67=1,488.67$ ԱՄՆ դոլար:

7.9. Ժառանգ ավանդ՝ Բանկի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդրման օր՝ 02.12.20թ.
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 730 օր (մինչև 02.12.22թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 8.50%՝ հերթական վերանայման ժամանակ մնում է անփոփոխ
- Տոկոսների վճարումը՝ ամենամյա
- Գումարի ավելացում՝ 24.04.21թ.-ին՝ 50,000 ՀՀ դրամ, 21.12.21թ.-ին՝ 150,000 ՀՀ դրամ
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 10.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

մեկ օրվա փոկոսային եկամուտ. $1,000,000$ (ներդրված գումար) \times 8.50 (տարեկան տոկոսադրույք)/ $100/366$ (տարվա օրերի քանակ) = 232.2 ՀՀ դրամ (մինչև 01.01.21թ.): $1,000,000$ (ներդրված գումար) \times 8.50 (տարեկան տոկոսադրույք)/ $100/365$ (տարվա օրերի քանակ) = 232.9 ՀՀ դրամ (01.01.21թ-ից հետո):
Մինչև ավանդի գումարի ավելացման օրը (24.04.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի $232.2 \times 30 + 232.9 \times 113 = 33,283.7$ ՀՀ դրամ:

<p>Գումարն ավելացնելուց հետո ներդրված գումարը կկազմի $1,000,000 + 50,000 = 1,050,000$ ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ $1,050,000 \times 8.50/100/365 = 244.5$ ՀՀ դրամ: Մինչև գումարի հաջորդ ավելացումը (21.12.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 244.5×241 (օր) = 58,924.5 ՀՀ դրամ:</p>
<p>Հերթական գումարի ավելացում կատարելուց հետո ներդրված գումարը կկազմի՝ $1,050,000 + 150,000 = 1,200,000$ ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ $1,200,000 \times 8.50/100/365 = 279.5$ ՀՀ դրամ: Մինչև ավանդի ժամկետի ավարտը (02.12.22թ.) տոկոսային եկամուտը կկազմի՝ 279.5×346 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /02.12.22թ./ օրը) = 96,707 ՀՀ դրամ:</p>
<p>ընդհանուր փոկոսային եկամուտ. $33,283.7 + 58,924.5 + 96,707 = 188,915.2$ ՀՀ դրամ:</p>
<p>զուտ փոկոսային եկամուտ. $188,915.2 - 18,891.5$ (ընդհանուր տոկոսային եկամտի 10.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 170,023.7 ՀՀ դրամ (ավանդատուին վճարման ենթակա գումար):</p>

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 1,370,024 ՀՀ դրամ, որից ընդհանուր առմամբ ներդրվել է 1,200,000 ՀՀ դրամը:

7.10. Ժառանգ ավանդ՝ Բանկի՝ ԱՀ տարածքում գործող մասնաճյուղերում ռեզիդենտի կողմից ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդրման օր՝ 02.12.20թ. (մինչև 02.12.22թ.)
- Ավանդի ներդրման ժամկետ՝ 730 օր
- Տարեկան տոկոսադրույք՝ 8.50%՝ հերթական վերանայման ժամանակ մնում է անփոփոխ
- Տոկոսների վճարումը՝ ամենամյա
- Գումարի ավելացում՝ 24.04.21թ.-ին՝ 50,000 ՀՀ դրամ, 21.12.21թ.-ին՝ 150,000 ՀՀ դրամ
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 5.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

<p>մեկ օրվա փոկոսային եկամուտ. $1,000,000$ (ներդրված գումար) $\times 8.50$ (տարեկան տոկոսադրույք)/$100/366$ (տարվա օրերի քանակ) = 232.2 ՀՀ դրամ (մինչև 01.01.21թ.): $1,000,000$ (ներդրված գումար) $\times 8.50$ (տարեկան տոկոսադրույք)/$100/365$ (տարվա օրերի քանակ) = 232.9 ՀՀ դրամ (01.01.21թ-ից հետո):</p>
<p>Մինչև ավանդի գումարի ավելացման օրը (24.04.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի $232.2 \times 30 + 232.9 \times 113 = 33,283.7$ ՀՀ դրամ:</p>
<p>Գումարն ավելացնելուց հետո ներդրված գումարը կկազմի $1,000,000 + 50,000 = 1,050,000$ ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ $1,050,000 \times 8.50/100/365 = 244.5$ ՀՀ դրամ: Մինչև գումարի հաջորդ ավելացումը (21.12.21թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 244.5×241 (օր) = 58,924.5 ՀՀ դրամ:</p>
<p>Հերթական գումարի ավելացում կատարելուց հետո ներդրված գումարը կկազմի՝ $1,050,000 + 150,000 = 1,200,000$ ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ $1,200,000 \times 8.50/100/365 = 279.5$ ՀՀ դրամ: Մինչև ավանդի ժամկետի ավարտը (02.12.22թ.) տոկոսային եկամուտը կկազմի՝ 279.5×346 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /02.12.22թ./ օրը) = 96,707 ՀՀ դրամ:</p>
<p>ընդհանուր փոկոսային եկամուտ. $33,283.7 + 58,924.5 + 96,707 = 188,915.2$ ՀՀ դրամ:</p>
<p>զուտ փոկոսային եկամուտ. $188,915.2 - 9,445.8$ (ընդհանուր տոկոսային եկամտի 5.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 179,469.4 ՀՀ դրամ (ավանդատուին</p>

վճարման ենթակա գումար):

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 1,379, 469 ՀՀ դրամ, որից ընդհանուր առմամբ ներդրվել է 1,200,000 ՀՀ դրամը: